Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1085[9]-06.10.2016-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) սույն մասի 1-9 կետերում չնախատեսված արժեթղթերում և ածանցյալ ֆինանսական գործիքներում, որոնց ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսը:»:

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Բաց ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել թանկարժեք մետաղներում կամ դրանց ձեռքբերման իրավունք տվող արժեթղթերում կամ ածանցյալ ֆինանսական գործիքներում:»:

Հոդված 2. Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ֆոնդի ակտիվների առավելագույն չափը, որ կարող է ներդրվել մեկ անձի կամ միևնույն խմբին պատկանող կամ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում, ինչպես նաև ֆոնդի ակտիվների առավելագույն չափը, որի վերաբերյալ ֆոնդը կարող է կնքել ածանցյալ ֆինանսական գործիքներ մեկ անձի կամ միևնույն խմբին պատկանող անձի կամ փոխկապակցված անձանց հետ.»:

Հոդված 3. Օրենքի մնացած բոլոր հոդվածներում «ածանցյալ գործիքներ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «ածանցյալ ֆինանսական գործիքներ» բառերով՝ դրանց համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-որդ օրը:

Ամփոփաթերթ

1-ին ընթերցմամբ ընդունված ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրա ընդունմամբ պայմանավորված այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի

N	Առաջարկության հեղինակը	հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դիրքորոշումը
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Քոքոբելյան (հնչեցվել է բանավոր նիստում՝ քննարկման ժամանակ)	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ և 6-րդ հոդվածներ	ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը նախատեսում է գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը... [Հոդվածում] չկա կետ, որը ուղղակիորեն սահմանափակում դնի՝ բացառությամբ, եթե դա այլ տեղում գրավադրված չէ կամ ինչ-որ այլ խնդիր [գոյություն ունի]: Մատնանշեցիք, որ սա...արժեթղթերին է վերաբերում: Սեփականության իրավունքի առումով ... էական չէ, դա բնակարան է, թե 10 անգամ թանկ արժեթուղթ կամ բաժնեմաս, քան	Հոդված 6-ը, որը լրացնում է ածանցյալ ֆինանսական գործարքներից բխող պարտավորության ապահովման համար գրավի արտադատական կարգով բռնագանձումը, լրամշակվել է: Հստակ նախատեսվել է, որ գրավի բռնագանձման առանձնահատուկ ռեժիմը տարածվում է **միայն ածանցյալ ֆինանսական գործարքներից** և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող գլխավոր

			առանձնատունը: [Սա] սեփականության իրավունքի նկատմամբ զարմանահրաշ երևույթ է, այն սահմանափակում է սեփականության անձեռնմխելիությունը, որը երաշխավորված է Սահմանադրությամբ:	համաձայնագրերի շրջանակում կնքված գործարքներից (ռեպո) բխող պարտավորությունների ապահովման ժամանակ: Հարկ է նշել, որ լրացմշակված նախագծի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ գրավի առարկա են հանդիսանում ածանցյալ գործքիները և դրամական միջոցները: Հստակեցվել է նաև, որ այս ռեժիմը տարածվում է միայն այն դեպքերի վրա, երբ գործարքի ոչ մի կողմ ֆիզիկական անձ չէ: Հետևաբար խոսքը վերաբերում է միայն ֆինանսական շուկաներում առևտրային գործունեությամբ զբաղվող անձանց գիտակցված գործարքների մասին, որոնց կնքումը պայմանավորված է կողմերի՝ շահույթ ստանալու կամ ռիսկերը հեջավորելու նպատակով: